ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Քրիստոնեական աշխարհի մեծագույն տոներից մեկն է Քրիստոսի հրաշափառ Համբարձման տոնը, երբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Հարությունից հետո, ավետարանչի խոսքերով ասած, համբառնում է երկինք, բազմելու Հայր Աստուծո աջ կողմը:

Այս տարի ևս Ս. Էջմիածնում մեծ շուքով նշվեց Քրիստոսի Համբարձման տոնը: Այն նշանավորվեց նաև հոգևոր ճեմարանի ավարտական լսարանի ութ շնորհալի ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ:

Մայիսի 12-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր տաճարի Ավագ խորանի վրա, տոնական ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագի Ս. Գրական ընթերցումներից առաջ սկսվեց սարկավագական ձեռնադրության արարողությունը:

Նորընծա սարկավագները իրենց կիսասարկավագական կոչումն ստացել էին նախորդ օրը՝ մայիսի 11-ին: Նույն օրը տեղի էր ունեցել նաև հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողների ուրարի ու դպրության չորս աստիճանների տվչության արարողությունը:

Սարկավագական ձեռնադրությունը խորհրդանշվեց վկայակոչությամբ՝ «Աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զնոսա ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Այնուհետև Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը օրհնությամբ տվեց «զսուրբ ուրարս», «իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս, յեկեղեցիս Աստուծոյ» և «հրաման խնկարկել և բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն»:

Ձեռնադրության արարողության ավարտից հետո ձեռնադրիչ սրբազան հայրը նորընծաներին ուղղված շնորհավորանքի ու խրատական խոսք ասաց:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը՝ «Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ» (շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը նորընծաներին առաջնորդեց Վեհարան, ուր Նորին Սրբությունը հայրական սիրով ընդունեց իր հոգևոր զավակներին, օրհնեց նրանց հոգևոր ծառայության ուխտը և մաղթեց, որ լինեն Հայ Եկեղեցու արժանի սպասավորներ:

Էլբեկ սրկ. Քարամյան.—Ծնվել է 1962 թ. հուլիսի 20-ին, Մարտունու շրջանի Երանոս գյուղում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի Պերճ Պոոշյանի անվան միջնակարգ դպրոցը:

1979—80 ուս. տարում սովորել է Երևա-

նի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական մասնաճյուղում, ապա նույն տարին ընդունվել է հոգևոր ճեմարան:

1982—84 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Արամայիս սրկ. Հունանյան.—Ծնվել է 1964 թ. հոկտեմբերի 19-ին, Վարդենիսի շրջկենտրոնում:

1971—81 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 1 միջնակարգ դպրոցը:

1981 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Սիմոն սրկ. Առուշանյան.—Ծնվել է 1964 թ. հունիսի 26-ին Չարենցավան քաղաքում:

1971 թ. սովորել է տեղի հմր. 2 միջնակարգ դպրոցում:

1974 թ. ընտանիքով տեղափոխվել է Էջմիածին, ուր և շարունակել է ուսումը տեղի Խ. Աբովյանի անվան հմր. 4 միջնակարգ դպրոցում և ավարտել այն 1981 թ.:

1981 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Սարգիս սրկ. Ղանդիլյան.—Ծնվել է 1963 թ. փետրվարի 16-ին Թալինի շրջանի Արագած ավանում:

1970—80 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 1 միջնակարգ դպրոցը:

1980 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան:

1981—83 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Սերժիկ սրկ. Մանսուրյան.—Ծնվել է 1964 թ. փետրվարի 13-ին, Իրանի Թեհրան քաղաքում:

1970 թ. ընտանիքով հայրենադարձվել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում:

1972—80 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 35 միջնակարգ դպրոցի 8-ամյա դասընթացը:

1980 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան:

1982—84 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Արա սրկ. Հովհաննիսյան.—Ծնվել է 1966 թ. հոկտեմբերի 24-ին Իրանի Բաղդադ քաղաքում:

1981 թ., ավարտելով տեղի «Միացյալ վարժարան» ութամյա դպրոցը, ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Մուրադ սրկ. Սողոմոնյան.—Ծնվել է 1959 թ. մայիսի 9-ին, Երևանում:

1966—76 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 175 միջնակարգ դպրոցը:

1976—83 թթ. աշխատել է Երևանի «Էլեկտրոն» գործարանում:

1977—79 թթ. ծառայել է սովետական բանակում:

1980—84 թթ. սովորել և ավարտել է Երևանի մեքենաշինական տեխնիկումը:

1983 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան:

Անդրանիկ սրկ. Տերտերյան.—Ծնվել է 1966 թ. փետրվարի 20-ին, Էջմիածնում:

1973—81 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 4 միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և նույն տարին ընդունվել հոգևոր ճեմարան, միաժամանակ ուսումը շարունակելով տեղի Հովհ. Հովհաննիսյանի անվան հմր. 3 միջնակարգ դպրոցում:

1984—86 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավագներին և մաղթում, որ նրանք լինեն նվիրյալ սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայ ժողովրդի: